թիւնն իրենց բովանդակ վիշտերուն։ Ահա՝ այս դեռ տի էակներուն, այս խեղճ պզտիկներուն պաշտպանութեան համար է նուէրն, զոր կը խնդրենք աղերսագին, այս Ս. Ծննդեան հրաշալի տօնին առթիւ, լանուն մանկացելոյն Յիսուսի, որ այնքան կը խանդաղատէր մանուկներուն վրայ, որ երբ կուզէին հեռացնել զանոնք իրմէ՝ կը կրկնէր սաստելով «Թոյլ տուք մանկուտին դալ առ իս»։

Լի ենք յուսով որ սիրալօժար պիտի պատասխանէք մեր հրաւէրին, և հացնէք մեզ Ձեր նուէրն, առատօրէն և զուարթութեամբ բղխած Ձեր սիրտէն, վստահ ենք, որ այս կարևոր ձեռնարկին յաջողութեանն համար, որով և եթ պիտի պակուի որբոց պաշտպանութեան գործը, պիտի բերէք մեզ Ձեր օգնութեան բաժինը և անտարբեր չպիտի մնաք այս նոր պէտքին առջև՝ դուք որ, ցարդ չ'դադարեցաք օգնել կարօտին և լքեալին, զուք որ չներեցիք Ձեր խղճին անպաշտպան թողուլ անօգնական մանուկը։ Գթութեանց Տէրն ընդունի Ձեր գթութեան նուէրը, և անոր փոխան հեղու Ձեր վրայ իր բաղմաղեղ բարիքներն ու շնորհներն, և ինքն իր Ամենակալ Աջովն հովանի Ձեր վրայ՝ զերծ պահէ զՁեզ, Ձեր ընտանիքն, Ձեր դաւակներն, Ձեր պարագաներն, ամէն վիշտերէ։ «Տուք և տացի Ձեզ»։

Մնամք աղօթարար

Պատրիարք Կոստանդնուպոլսոյ

ՄԱՂԱԿԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

—

ՀՐԱՀԱՆԳ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԳԱՒԱՌԱԿԱՆ ԱԶԳԱՑԻՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐՈՒ

Կազմութիւն

ՅՕԴ. 1.— Գաւառական առժամանակեալ որբանոցներու տնողութեան պայմանաժամին լրանալովը՝ տակաւին անչափահաս գտնուող որբ և կարօտ մանուկներն խպառ անխնամ չթողլու համար Ազգային Պատրիարքարանի կողմէ առաջնորդական գլխաւոր կեդրոններու մէջ՝ ուր որ լարմար դատուի, երկու սեռի տղոց համար՝ ուրոյն արհեստանոցներ պիտի հաստատուին։

ՅՕԴ. 2.—Այս արհեստանոցներու ընդհանուր հատկութիւններն են,—1°. Կայսերական կառավարութեան կողմէ կարօտ մանկանց համար զանազան առիթներով շնորհուած նպաստք. —2°. Բարեսէր ազգայնոց կողմէ տրուած տարեկան այն կամաւոր նուէրն, զոր Սրբազան Պատրիարքն ամէն տարի Ս. Ծննդեան տօնին առթիւ կստանայ ուղղակի՝ մասնաւոր կերպերով դիմելով անոնց։—3°. Բարերարներու նուիրած և սահ-

մանած դումարները՝ որքերը որեւէ կերպով հոգալու համար։ —4°. Կտակաւ թողուած ու այլ և այլ միջոցներով ստացուած պատահական նուէրներ։—5°. Դաւառական աղդային վարչութեանց և Թաղական խորհրդոց կողմանէ հայթայթուած նպաստներ։—6° Վանքերու տրամադրելի հասոյթներ և մասնաւոր սանատէրերու նպաստն, արհեստանոցներու յատուկ։—7°. Եւ վերջապէս արհեստանոցներու արտադրած վաճառքներու զուտ շահն։

ԳՕԴ. 3.— Արհեստանոցներու հասոյթներն կամիտիուին ու կըպահուին Պատրիարքարանի Նպաստից Սնտուկին մէջ, որ կը գտնուի արդէն Ս. Պատրիարքին պահպանութեան ներքև։

ԳՕԴ. 4.—Արհեստանոցք կըհաստատուին այն ժամանակ՝ երբ տրամադրելի բաւականաչափ հասոյթներ դոյանան, կամ բարերար մը մասնաւոր կարդադրութեամբ կամ առաջնորդական վիճակ մը տեղական միջոցներով ստանձնէ հոգալ ծախքը, առանց պարտք ծանրաբեռնելու Առաջնորդարանին վրայ։

ԳՕԴ 5.—Այս արհեստանոցներու կազմութեան նպատակն է մասնաւորապէս 'որբ և անտէրունչ մանուկները խնամարկել, և ընդհանրապէս՝ թէ այս կարդի պատսպարեալներու և թէ ուրիշ դաւառացի տղայոց ըստ տեղւոյն օգտակար արհեստներ և հողագործական կարևոր գիտելիքներ սովրեցնել և միջոց ընձեռել անոնց որ անձնական աշխատութեամբ հոգան իրենց ապրուստն, և ըլլան բարի և օգտակար անդամներ Պետութեան և Ազգին։

ԳՕԴ. 6.—Որբ և անտէրունչ տղաքներէն որոշեալ թըւով մաս մը դիշերօթիկ կընդունուի, որու $^{3}/_{4}$-ը կառնուի վիճակին թեմերէն և $^{1}/_{4}$-ը ըստ կարդադրութեան Պատրիարքարանի՝ ուրիշ կարօտեալ վայրերէն. իսկ ցերեկեայ կընդունուին այն տղաքներն, որք արհեստանոցի քաղաքին մէջ բնակութիւն ունին։

Եթէ փակուած որբանոցներէ ելնող տղոց մէջ կան այնպիսիք, որ տակաւին կը կարօտին պաշտպանութեան և որեւէ արհեստ չեն կրցած սովրիլ, կը դետեղուին Պատրիարքարանի որոշմամբ՝ յարմար արհեստանոցներու մէջ։

ԳՕԴ. 7. Արհեստանոցք կը հաստատուին յարմար վայրերու ու շէնքերու մէջ, և որչափ հնար է Եկեղեցիին մօտ։

ԳՕԴ. 8.—Դիշերօթիկ տղաք որոշեալ ժամանակներու մէջ կերթան տեղւոյն աղդային դպրոցն, նախնական ուսումն ընդունելու, և մնացեալ ժամանակներ կաշխատին արհեստանոցին մէջ։

Մատակարարութիւն

ԳՕԴ. 9.—Դաւառական արհեստանոցք կը մատակարարուին յատուկ Հոգաբարձութեանց ձեռօք, որք վիճակին Առաջնորդին կամ Տեղապահին նախագահութեան ներքև կը

բաղկանան հինգ անդամէ, որոց մին քահանայ պէտք է լինի, իսկ անդամոց երկուքը քահանայ կըլլինին, երբ աղջկանց լաւուկ է արհեստանոցն։

Հոգաբարձութեանց անդամք պիտի լինին իրենց ուղղութեամբ և պատուաւորութեամբ ծանօթ անձեր, ըստ բաւականին բարեկեցիկ վիճակի մէջ, և դատապարտութեան ներքն չինկած։

ԳՕԴ. 10.—Հոգաբարձութիւնք կընտրուին Պատրիարքարանէն՝ ընտրելեաց երկպատիկ ցանկի մը վրայ, զոր Առաջնորդն լայտագրով մը կը ներկայացնէ, Գաւառական վարչութեանց հետ համախորհուրդ, տալով կարևոր ծանօթութիւններն ընտրելեաց նկատմամբ։ Սակայն Պատրիարքարանն կրնայ նոյն ցանկէն դուրս՝ անձեր ալ ընտրել։

ԳՕԴ. 11.—Հոգաբարձութիւնք կը պարտաւորին մատակարարել արհեստանոցն որոշեալ ելմտացոյցին համաձայն, առանց բնաւ բաց կամ պարտք թողլու, հայրաբար խնամել տղաքն, վարել արհեստանոցի գործառնութիւններն, ընտրել որբերն և արհեստանոցի աշակերտող տղաքները. որոշել պաշտօնեաներն ու արհեստի վարպետներն և հսկել անոնց ընթացքին վրայ։

ԳՕԴ. 12.—Արհեստանոցի պաշտօնակալաց ընտրութիւնն հոգաբարձութեան կողմէ կըտեղեկագրուի Աղդ. Պատրիարքարանի։ Նոյն պաշտօնակալք չեն կարող միջամուխ լինել տեղական աղդային գործերու և Պատրիարքարանի որոշմամբ կը դադրին անմիջապէս պաշտօնէ, երբ տեղի տան որ և է դալթակղութեան ու վէճի։

ԳՕԴ. 13.—Հոգաբարձութիւնք ամեն տարեգլուխ կուղարկեն ի Պատրիարքարան նոյն տարւոյ հաշուեցոյցն ու յաջորդին ելմտացոյցն՝ լաւուկ տեղեկագրով մը, որով պէտք է պարզուի հաստատութեան ընդհանուր վիճակը, և ձեռք բերուած արդիւնքն։

ԳՕԴ. 14.—Հաստատութեան բոլոր ծախքերն տեղի կունենան Հոգաբարձութեան որոշմամբ և նախագահին հրամանաւ։ Հոգաբարձութեան անդամք չեն կրնար այս հաստատութեանց հետ իրենց անձնականին համար առևտուրի յարաբերութիւն ստեղծել ուղղակի և անուղղակի միջոցներով, նոյնպէս չեն կարող թոշակաւոր պաշտօն վարել հաստատութեան մէջ։

ԳՕԴ. 15.—Հոգաբարձութիւնք ուղղակի կը թղթակցին Պատրիարքարանի հետ, և իրենց դրութիւնք նախագահին և բոլոր անդամոց ստորագրութիւնը պէտք է կրեն։ Նախագահը կը պարտաւորի իրեն ղրկուած դրութիւն, դրամ և այլ ինչ անմիջապէս հաղորդել Հոգաբարձութեան։

ԳՕԴ. 16.—Հոգաբարձութեանց անդամք ոչ առանձինն և ոչ ալ առանց նախագահի չեն կարող գործեր տնօրինել կամ

հրահանգներ տալ հաստատութեան պաշտօնէից, այլ կըպարտաւորին խորհրդակցութեամբ տալ որոշումներն, արձանագրելով ատենագրութեանց մէջ, և նախագահին միջոցաւ գործադրութեան դնել։

ՅՕԴ. 17. – Հոգաբարձութեանց պաշտօնն երկու տարի կըտեւէ։ Պատրիարքարանն իրեն կը վերապահէ վերահաստատել զանոնք, երբ լարմար դատի։

ՅՕԴ. 18.—Հոգաբարձութիւնն կամ անդամներէն ոք երբ թերանայ իր պաշտօնին մէջ և զեղծումներ գործէ, Պատրիարքարանը իրողութիւնը ստուգելէ ետքը՝ կը դադրեցնէ զայն պաշտօնէ։

Արհեստական կրթութիւն

ՅՕԴ. 19.—Արհեստանոցներու մէջ լատուկ սենեակներ պիտի լատկանան, իրենց կարեւոր կազմածքով, ուր տղայք՝ դիշերօթիկ և ցերեկեայ՝ որոշեալ ժամերու մէջ պիտի պարապին արհեստ սորվելու, մասնագէտ վարպետներու միջոցաւ։

ՅՕԴ. 20.—Արհեստներու տեսակն և որքանութիւնը հոգաբարձութիւնը կըսահմանէ ձեռնհաս անձերու հետ խորհրդակցելով, և Պատրիարքարանի որոշմուն ենթարկելէ ետքը՝ կսկսի գործադրութիւնն։ Հոգաբարձութիւնք կը պարտաւորին նիւթական միջոցներու ներած չափով ընտրել այնպիսի արհեստներ, որոց արտադրութիւնք ոչ միայն տեղական սպառմանց լատուկ լինին, այլ և ուրիշ տեղեր տարածուելով՝ կարենան շահու աղբիւր մը դառնալ ժողովրդեան։

ՅՕԴ. 21.—Պատրիարքարանն կը սահմանէ՝ Հոգաբարձութեանց լատագրին վրայ՝ արհեստական ճիւղին նիւթական պիտուլից համար լատուկ դրամագլուխ մը։ Այս դրամագլուխը անկորուստ պէտք է պահուի, իսկ արտադրութեանց վաճառումէն զոյացած շահուն կէսը կը կցուի դրամագլխին և միւս կէսը կը պահուի, մէկ մէկ նպաստ տրուելու համար արհեստաւոր կարօտ տղոց՝ իրենց արհեստին վերաբերող գործիքն գնելու համար, երբ արհեստն աւարտելով գործելու կելնեն։

ՅՕԴ. 22.—Հոգաբարձութիւնք կըպարտաւորին արհեստանոցներու նիւթական պիտուլից համար զատ հաշիւ բռնել Պատրիարքարանի կողմէ ցոյց տուած դրութեամբ ու ամէն երեք ամիս՝ հաշուեցոյցն հաղորդել Պատրիարքարանի, տարին մի անգամ ղրկելով նաև արտադրութեանց նմոյշներն, անոնց իսկական ծախուց հաշուեցրոյցը։

ՅՕԴ. 23.—Հոգաբարձութիւնք կրնան արհեստարաններու մէջ պատրաստելի վաճառքներու համար ուղղակի լանձնարարութիւններ ընդունիլ և գործադրել, Պատրիարքարանի լայտադրելով ի տեղեկութիւն։

ՅՕԴ. 24. – Արհեստաւարտ տղոց տեղ անմիջապէս նորերն կառնուին և մեկնողներու անուններն կը ծանուցուին Պատրիարքարանի կարեւոր պարագաներով։

ՅՕԴ. 25.—Արհեստանոցի աշակերտաց մէջ եթէ գտնուին ալնպիսիք, որ դերազանց արհեստի ընդունակութիւն ցոյց տան ու ապագայ խոստանան, Հոգաբարձութիւնը կը յանձնարէ անոնց անունը Պատրիարքարանի, որ զանոնք կը ղրկէ ուր որ անկ է, կատարելագործելու համար իրենց արհեստն, եթէ նիւթական միջոցները ներեն։

ՅՕԴ. 26.—Հոգաբարձութիւնք կը պարտաւորին ուսումնասիրել այն միջոցներն, որոնցմով հնարին կրնալ լինիլ գիւղացի ժողովրդեան երկրագործական աշխատութիւններն արդիւնաւորել և հողին տեսակին ու կլիմային համաձայն՝ շահաւէտ բերքերու մշակութիւնը քաջալերել. որպիսիք են, ափիոն, բամպակ, թթենի (չերամի), շուշմայ, կտաւատ, կանեփ, և ամեն տարի ուրոյն տեղեկագրով մը ներկայացնել Պատրիարքարանի իրենց ուսումնասիրութեան արդիւնքը և տեղւոյն առևտրական գործոց վիճակը, որպէս զի կարելիութեան սահմանին մէջ Պատրիարքարանի կողմէ ընծայուին կարևոր դրութիւններն՝ հողագործական աշխատութեանց արդիւնաւորման համար։

ՅՕԴ. 27.—Այդ նպատակաւ հողագործական վարժութիւնք տեղի պիտի ունենան արհեստանոցներու մէջ, և այն պարագային մէջ երբ յարմարութիւն չգտնուի, տեղւոյն մօտակայ վանքերու հողերն ու արտերն այդ նպատակին պիտի գործածուին՝ յատուկ կարգադրութեամբ։

Նպաստից Յանձնաժողովոյ հետ խորհրդակցութեամբը կազմուած և հրամայուած ի գործադրութիւն։

Պատրիարք Կոստանդնուպոլսոյ
ՄԱՂԱԿԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Ի Պատրիարքարանի, 20 Նոյեմբեր 1901.

ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՆՈՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

«Լումայ»-ի անցեալ համարում հաղորդել էինք, որ Սսի մայրավանքում կատարուած ժողովում ձայների առաւելութեամբ Կիլիկիայի Տան Կաթողիկոս ընտրուեցաւ տաճկահայոց եկեղեցականութեան լաւագոյն ներկայացուցիչներից մէկը՝ տ. Գէորգ եպիսկոպոս Երիցեան։

Եւ մինչ ամբողջ ազգը վայրկեան առ վայրկեան սպասում էր լսել նորին սրբազնութեան Հայրապետական օծում ընդունելու ուրախարար լուրը՝ Կ. Պոլսի լրագիրները, ի ցաւ սրտի բոլոր բարեմիտ հայերի, ծանուցին սրբազանի Սսի Ա-